Կապիկի Ծաղիկ
Ուղեցույց Բիզնեսների և Գործատուների Համար

Ծանոթություն

Ներկայումս ԱՄՆ-ում և ամբողջ աշխարհում կա կապիկի ծաղիկի բռնկում: Կապիկի ծաղիկը առաջանում է մի վիրուսից, որը մինչև 2022 թվականի մայիսը Միացյալ Նահանգներում հազվադեպ էր հանդիպում: Ընդհանուր բնակչության շրջանում և շատ աշխատատեղերում կապիկի ծաղիկի փոխանցման վտանգը ներկայումս շատ ցածր է: Այս ուղեցույցը տեղեկատվություն է տրամադրում բիզնեսներին և գործատուներին կապիկի ծաղիկի ներկայիս բռնկման մասին և նշում է աշխատավայրում վարակման և վարակի փոխանցման վտանգը նվազեցնելու քայլերը:

Նախապատմություն

Կապիկի ծաղիկը հիվանդություն է, որն առաջացնում է ցան, որը կարող է ցավոտ լինել: Ցանը կարող է նմանվել ուռուցքի, բշտիկների, խոցերի կամ կեղևակալված մաշկի: Այն կարող է նաև առաջացնել գրիպանման ախտանիշներ, ներառյալ ջերմություն: Կապիկի ծաղիկը շատ ավելի քիչ վարակիչ է, քան COVID-19-ը:

Կապիկի ծաղիկի ցանի օրինակներ

Ինչպես է տարածվում կապիկի ծաղիկը

Հայտնի է, որ կապիկի ծաղիկը տարածվում է կապիկի ծաղիկով վարակված անձի հետ սերտ և/կամ երկարատև շփման միջոցով, ներառյալ՝

- Կապիկի ծաղիկի ցանի, կեղևակալված հատվածի կամ խոցերի հետ մաշկ-մաշկ անմիջական շփումը:
- Շնչառական արտազուկների հետ շփումը: Դա կարող է տեղի ունենալ երկարատեւ, դեմ առ դեմ կամ մտերմիկ ֆիզիկական շփման ժամանակ:
- Շփումը առարկաների և գործվածքների հետ (օրինակ՝ չլվացված հագուստ և անկողնային պարագաներ, ընդհանուր սրբիչներ), որոնք օգտագործվել են կապիկի ծաղիկով հիվանդի կողմից և չեն մաքրվել:

Կապիկի ծաղիկով հիվանդ անձը կարող է այն փոխանցել ուրիշներին սկսած ախտանիշների սկսվելուց մինչև ցանի լիարժեք բուժվելը և մաշկի նոր շերտի ձևավորվելը: Դա սովորաբար տևում է 2-ից 4 շաբաթ:

Գիտնականները շարունակում են ավելի ուսումնասիրել կապիկի ծաղիկի տարածումը, ներառյալ՝ արդյոք վիրուսը կարող է տարածվել, եթե անձի մոտ չկա որևէ ախտանիշ, որքան հաճախ է այն

տարածվում շնչառական արտազատուկների և ցանկացած այլ տեսակի շփումների կամ վարքագծի միջոցով, որոնք կարող են մարդկանց մեծ վտանգի ենթարկել: Հանրային Առողջության Վարչությունը կշարունակի տրամադրել տեղեկատվություն ավելին իմանալու դեպքում:

Մանրամասների և վերջին տեղեկությունների համար տե՛ս՝ ph.lacounty.gov/monkeypox:

Վարակի կանխարգելմանն ուղղված ընդհանուր գործողություններ բոլոր աշխատավայրերի համար

- Խրախուսեք և աջակցեք աշխատակիցներին մնալ տանը, եթե հիվանդ են:
- Կիրառեք սովորական մաքրման և ախտահանման մեթոդներ և նյութեր: Հետևեք ձեր հաստատության մաքրման կանոններին, ներառյալ անկողնային պարագաները, սրբիչները և համազգեստները լվանալը, օգտագործումների միջև սարքավորումները մաքրելը, հաճախակի հպման մակերեսները սրբելը և այլն: Մաքրման/ախտահանման ընթացքում սովորաբար խորհուրդ է տրվում կրել մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ:
- Ապահովեք ձեռքերի հիգիենայի պահպանումը: Աշխատողների և հաճախորդների համար հասանելի դարձրեք ձեռքերը լվանալու հարմարանքները և/կամ ձեռքերը ախտահանող միջոցները: Հավաստիացեք, որ աշխատակիցները բավարար ժամանակ ունենան աշխատանքի ընթացքում ձեռքերը լվանալու համար:
    - Խրախուսեք աշխատակիցներին լվանալ կամ ախտահանել ձեռքերը ծառայություններ մատուցելուց անմիջապես առաջ և հետո: Յուրաքանչյուրը, ով դիպչում է վերքերին կամ չլվացած հագուստին, սպիտակեղենին կամ մակերեսներին, որոնք կարող են շփված լինել վերքերի հետ, պետք է կրեն մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ և անմիջապես լվանան ձեռքերը:
    - Լվացեք ձեռքերը օճառով և տաք ջրով առնվազն 20 վայրկյան:
    - Ձեռքերի ախտահանիչը պետք է պարունակի առնվազն 60% ալկոհոլ:
    - Բազմաթիվ լեզուներով պաստառները, որոնք հիշեցնում են մարդկանց լվանալ կամ ախտահանել ձեռքերը և ցուցադրում են ձեռքերը լվանալու կարգը, հասանելի են այստեղ:
- Խրախուսեք աշխատակիցներին և հեշտացրեք նրանց համար ցանկացած պատվաստանյութի դեղաչափերը ժամանակին ստանալը, որոնց համար նրանք իրավասու են:
- Տեղադրեք հստակ տեսանելի ցուցանակներ ձեր բիզնեսի մուտքի մոտ և էլեկտրոնային հարթակներում (օրինակ՝ կայքէջ, սոցիալական ցանց, էլեկտրոնային նամակ-հաստատումներ)՝ այցելուներին հիշեցնելու համար, որ չմտնեն հաստատության տարածք, եթե հիվանդ են կամ ունեն ախտանիշներ:

Հանրային Առողջության Վարչությունը շարունակում է խստորեն հորդորել դիմակ կրել փակ տարածքներում՝ COVID-19-ի փոխանցման վտանգը նվազեցնելու համար:

Եթե ձեր հաստատությունում կա կապիկի ծաղիկի հաստատված դեպք՝

- Ծանոթացեք CDC-ի՝ Տների և Ոչ Առողջապահական Հաստատությունների Ախտահանման Ուղեցույցին

- Եթե աշխատակիցը վարակված է կապիկի ծաղիկով, տե՛ս Մեկուսացման Հրահանգները Կապիկի Ծաղիկով Վարակված Անձանց Համար, որը հասանելի է բազմաթիվ լեզուներով ph.lacounty.gov/monkeypox կայքէջում:
- Եթե աշխատակիցը շփվել է կապիկի ծաղիկի վարակի հետ, տե՛ս Կապիկի Ծաղիկ Վարակի Հետ Շփված Անձանց Ուղեցույցը, որը հասանելի է բազմաթիվ լեզուներով ph.lacounty.gov/monkeypo կայքէջում:

Վտանգի նվազեցում մաքրման միջոցով (առողջարաններ, հյուրանոցներ, մարզասրահներ, անձնական խնամքի այլ ծառայություններ մատուցող կենտրոններ)

Այցելուների կամ աշխատակիցների կողմից օգտագործվող մակերեսները և սարքավորումները
Հաճախակի հպման մակերեսները և սարքավորումները (օրինակ՝ մարզասրահներում և առողջարաններում) պետք է մաքրվեն և ախտահանվեն՝ հետևելով մաքրման սովորական կանոններին և օգտագործելով EPA-ի կողմից գրանցված արտադրանքները, որոնք համապատասխան են կապիկի ծաղիկ վարակի դեպքում (տե՛ս ստորև): Մաքրելիս/ախտահանելիս անձնակազմը պետք է կրի մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ: Օգտագործելուց հետո ձեռնոցները պետք է դեն նետել, որից հետո պետք է լվանալ ձեռքերը:

Ամանեղեն և սպասքի պարագաներ
Կեղտոտ ամանեղենը և սպասքի պարագաները կարելի է լվանալ աման լվացող մեքենայում՝ լվացող հեղուկով և տաք ջրով, կամ ձեռքով՝ տաք ջրով և սպասքի օճառով:

Սպիտակեղեն, սրբիչներ և հագուստ
Սպիտակեղենը, սրբիչները և հագուստը (օրինակ՝ մարզասրահներում, հյուրանոցներում և անհատական ծառայություններ մատուցող բիզնես-ձեռնարկություններում) կարելի է մաքրել սովորական լվացող միջոցներով: Կեղտոտ լվացքը պետք է զգուշորեն և անմիջապես տեղադրել լվացքի համար նախատեսված տոպրակի մեջ և չթափահարել կամ այլ գործողությունով չնպաստել հնարավոր վարակիչ նյութերի տարածմանը: Խորհուրդ է տրվում, որ սպիտակեղենին, սրբիչներին և այլ մարդկանց կողմից օգտագործվող հագուստին դիպչող աշխատողները, կրեն մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ և այնպիսի հագուստ կամ հանդերձանք, որոնք ծածկում են մաշկի բոլոր բաց մասերը:

Տե՛ս CDC-ի՝ Տների և Ոչ Առողջապահական Հաստատությունների Ախտահանման Ուղեցույցը՝ կապիկի ծաղիկով վարակված լինելու ընթացքում և դրանից հետո հաստատությունների մաքրման և ախտահանման հրահանգների համար:

Մաքրող արտադրաքներ
ԱՄՆ Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալությունը (EPA) ունի ախտահանող միջոցների ցանկ, որոնք գրանցված են կապիկի ծաղիկ վիրուսի դեմ օգտագործման համար: Ցանկը ներառում է հայտնի արտադրանքներ, որոնք արդեն կիրառվում են բազմաթիվ բիզնեսների և անձանց կողմից: Ցանկը կարելի է գտնել EPA-ի կայքէջում, որտեղ գործում է

որոնման դաշտ՝ ախտահանող միջոցները ըստ արտադրանքի անվանման, շփման ժամանակի և մակերեսի տեսակի որոնման համար:

Ստուգեք, որ ձեր արտադրանքը գրանցված լինի EPA-ի ցանկում: Գտեք ապրանքի EPA գրանցման համարը:

- Կարդացեք հրահանգները. ստուգեք «օգտվել կայքերից» և «մակերեսների տեսակները» բաժինները՝ հավաստիանալու համար, որ արտադրանքը համապատասխանում է ձեր մակերեսին: Այնուհետև կարդացեք «նախազգուշական հայտարարությունները»:
- Նախապես մաքրեք մակերեսը. մակերեսը լվացեք օճառով և ջրով, եթե հրահանգները նշում են նախնական մաքրումը կամ եթե մակերեսը տեսանելիորեն կեղտոտ է: Կեղտը կարող է թույլ չտալ ախտահանիչին գործել:
- Հետևեք շփման ժամանակին վերաբերող հրահանգներին. մակերեսը պետք է թաց մնա նշված ժամանակահատվածի ընթացքում, որպեսզի ապահովվի արտադրանքի արդյունավետ գործողությունը: Անհրաժեշտության դեպքում կրկին լցրեք հեղուկը:

Վտանգի նվազեցում անձնական խնամքի ծառայություններ մատուցելիս

Անձնական խնամքի ծառայությունների մատուցումը, ինչպես օրինակ՝ մերսումը և մաշկի խնամքը, պետք է ունենա կապիկի ծաղիկ վարակի փոխանցման ցածր վտանգ, եթե պահպանվում են վարակի վերահսկման և վարակիչ հիվանդությունների կանխարգելման արդեն հաստատված գործողությունները:

- Ախտահանեք սարքավորումները, որոնք անմիջական շփում են ունեցել հաճախորդի մաշկի հետ, ներառյալ սեղանները, աթոռները և դեմքի/գլխի հենակները:
- Օգտագործելուց հետո լվացեք սրբիչները և սպիտակեղենը: Մի՛ օգտագործեք չլվացված սրբիչներ և սպիտակեղեն:
- Անմիջապես լվացեք ձեր ձեռքերը այնպիսի ծառայություններ մատուցելուց առաջ և հետո, որոնք ներառում են հաճախորդի մաշկին դիպչելը:

Ընդհանրապես, ուղիղ շփումների հավանականությունը նվազեցնելու համար կրեք մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ և հավաստիացեք, որ ծառայություններ մատուցելիս ծածկված է ձեր մաշկի այն հատվածը, որը դիպչում է հաճախորդի մաշկին, ինչպես նաև օգտագործված շորերին, սրբիչներին, սավաններին և այլ իրերի դիպչելիս: Շնչառական արտազատուկների հետ շփումը նվազեցնելու համար անձնական խնամքի ծառայություններ մատուցելիս կրեք դիմակ, հատկապես այն ծառայությունների ժամանակ, որոնք ներառում են դեմ առ դեմ երկարատև սերտ շփում: Թե աշխատողի, թե հաճախորդի կողմից դիմակ կրելը լավագույնն է COVID-19-ի վտանգը նվազեցնելու համար, ինչպես նաև կարող է օգնել նվազեցնել կապիկի ծաղիկի վտանգը:

Բացի այդ, խորհուրդ է տրվում՝

- Տեղադրել ցուցանակներ, որոնք հրահանգում են հաճախորդներին հետաձգել ծառայությունները, եթե ունեն ջերմություն կամ նոր, անբացատրելի ցան:
- Նախքան ծառայություն մատուցելը հարցնել հաճախորդներին՝ արդյոք նրանք ունեն գրիպանման որևէ ախտանիշ (օրինակ՝ ջերմություն) կամ նոր կամ անբացատրելի ցան: Խնդրեք նրանց հետաձգել ծառայությունը, եթե ունեն ախտանիշներ:
- Տեսողությունով՝ նայելով, ստուգել մաշկի այն հատվածը, որին դիպչելու եք:

- Չդիպչել ցանին (ներառյալ ուռուցքները, բշտիկները, թարախակույտերը, խոցերը կամ կեղևակալված մաշկը), որոնք կարող են վարակիչ լինել (տե՛ս վերևի նկարները):

Հետևեք ձեր բիզնեսի/հաստատության տեսակին վերաբերող պահանջներին, ինչպիսիք են՝

- Կալիֆորնիայի Վարսավիրության և Կոսմետոլոգիական Ծառայությունների Խորհուրդ
- Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության՝ Առողջարաններ և Մերսման հաստատություններ

Հավելյալ Տեղեկություններ

Լոս Անջելեսի Շրջան, Հանրային Առողջության Վարչություն
ph.lacounty.gov/monkeypox

Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոններ
cdc.gov/poxvirus/monkeypox/index.html

Կալիֆորնիայի Հանրային Առողջության Վարչություն
cdph.ca.gov/Programs/CID/DCDC/Pages/Monkeypox.aspx